3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հուլիսի 1-ից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24ի**
**ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**
**ԹԻՎ 140-Ա ՈՐՈՇՄԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ

**1.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սաների**

1.Մելիքյան Արտյոմ Ռոմանի
2.Պողոսյան Կարեն Ալեքսանի
3.Հակոբյան Անգելինա Գառնիկի
4.Խաչատրյան Հովհաննես Սեդրակի

**2.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սաների**

1.Գաբրիելյան Սևակ Մուշեղի
2.Գաբրիելյան Սարգիս Մուշեղի
3.Սարգսյան Դավիթ Գրիգորի
4. Սարգսյան Սարգիս Գրիգորի

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի
ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 140-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ 50% ՆՎԱԶԵՑՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ

**1.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի**

1.Մանուկյան Մարիամ Գրիշայի

**2.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի**

1.Հակոբյան Մարիամ Հրայրի

**3.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի**

1.Ափինյան Սևակ

**4.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սաների**

1. Թորոսյան Վեռա
2.Հովհաննիսյան Անահիտ Արմանի
3.Ալոյան Արման Ռուստամի
4. Գալստյան Ալեն Հովիկի
5.Այվազյան Արմեն Սամվելի
6.Հովհաննիսյան Ջուլյա Դավիթի

**5.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սաների**

1.Իսկանդարյան Աշոտ Անդրանիկի
2.Բարսեղյան Սիրանուշ Հայկի
3.Բաբայան Անգելինա Սեյրանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2022 թվականի N 141-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.2022 թվականի անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններ սահմանել հետևյալ ֆիզիկական անձանց՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 07
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 141-Ա ՈՐՈՇՄԱՆ

| հ/հ | | ՀԾՀ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՍՑԵ | ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԱՍՑԵՆ | ՀԱՐԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ<br>2022 Թ. ԱՐՏՈՆ. ՉԱՓԸ (ԴՐԱՄ) | ՈՒՄ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գույքահարկ փոխադրամիջոցների գծով | | | | | | | |
| 1 | | 1330010124 | ԽԱՉԻԿ ԱՐՄԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ | ք. Արմավիր,Սայաթ-Նովա փ. 6 Ա շ.21 բն. | ք. Արմավիր, Սայաթ-Նովա փ. 6 Ա շ. 21 բն. | 34832 ՀՀ դրամ | Հանձ. |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2022 թվականի N 142-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24 –րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.Հավանության արժանացնել Արմավիր համայնքի համար մշակված տեղական սոցիալական ծրագրերը, որպես առանձին ծրագիր՝ համաձայն հավելվածի:

2.Հավելվածում ներառված ծրագրերը իրականացնել առաջնահերթության կարգով՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի
ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 142-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Արմավիր համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը

## 1. Արմավիր համայնքի սոցիալական կարիքների գնահատում

| | |
|---|---|
| Բնակչության թիվ | 84 790 |
| Տնային տնտեսությունների թիվ | 21.020 |
| Երեխաների թիվ | 28 268 |
| Գործազուրկներ | N/A |
| «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ | 1248 |
| Համայնքային սոցիալական աշխատող | Այո |
| ՀԿ-ների թիվը | 4 |
| Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ | 37<br>(տարիք 18-65՝ 35, 65+՝ 14 մասնակից) |

Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

Համայնքի առաջնային կարիքներից մասնակիցներն առանձնացրեցին հետևյալ կարիքները

- Արտադրամասերի սակավությունը բնակչության թվի համեմատ:
- Երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդիրներ:
- Տարեցների խնամքի և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի կենտրոնների բացակայություն կամ սակավություն:
- Հաշմանդամություն ունեցող չափահաս անձանց զբաղվածության և խնամքի խնդիրներ:
- Նեղ մասնագիտական, առողջապահական ռեսուրսի կամ որակի պակաս:
- Սոցիալական ծառայությունների իրազեկման և հասցեական ուղորդման խնդիրներ:
- Երեխաների զարգացման կենտրոնների, խաղահրապարակների սակավություն և բացակայություն տարածքներում, ոչ համաչափ բաշխում:

Առաջարկներ

- Համայնքում բացել կարի արտադրամաս,
- Բացել տարեցների ժամանցի և խնամքի կենտրոն,

- Բացել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ,
- Բացել մասնագիտական ուղղվածության, ստեղծագործական կենտրոններ՝ կավագործություն, ասեղնագործություն, քանդակագործություն, թատրոն, երաժշտություն և այլն:
- Բացել կանանց ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները,
- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ծառայություն, խնամքի կենտրոն, որպեսզի ծնողները կարողանան աշխատել:
- Շատ լավ կլիներ, որ բացվեին գործարաններ, նոր աշխատատեղեր, որ աղքատությունը նվազի և մարդիկ ապրեն արժանավայել:
- Վերանայել ծերության թոշակի չափանիշները, հաշվի առնվել մարդկանց աշխատունակությունը, մասնագիտական փորձը, ֆիզիկական հնարավորությունները, որպեսզի այդ տարիքում գտնվող մարդն իրեն անպիտան չզգա, ունենա շփման հարթակ երիտասարդ սերնդի հետ, փոխանցի տարիներով ձեռքբերված հմտությունները:
- Համայնքում գործող պետական և ոչ պետական կառույցների և բնակչության միջև անվստահության մթնոլորտը փոխելու համար հաճախ կազմակերպել հանդիպումներ ոլորտի մասնագետների և հիմնական շահառուների միջև, խրախուսել ձեռներեցությունը, նոր գաղափարները, աշխատասիրությունը:
- Համայնքի ծայրամասային թաղամասերում ուշադրություն դարձնել վաղ դեռահասության փուլում գտնվող երեխաների վրա: Նրանց արտադպրոցային կրթությունն ու ժամանցը կազմակերպելու համար ստեղծել կենտրոններ, որտեղ կուսուցանվեն կյանքի հմտություններ, կար ու ձև, ինքնապաշտպանությունը խրախուսող սպորտաձևեր, փայտագործություն:
- Համայնքում հիմնադրել ընտանեկան կենտրոն, որտեղ հոգեբանական ծառայություն կստանան ոչ միայն կանայք, այլ նաև տղամարդիկ, զույգերը, որից կշահեն երեխաները:
- Բարձրացնել իրազեկվածությունը համայնքային իրադարձությունների վերաբերյալ, ապահովել համայնքի բնակիչների տեղեկացվածությունը:
- Որպեսզի մատուցվող սոցիալական ծառայությունները արդյունավետ և որակյալ լինեն, անհրաժեշտ է դրանք համալրվեն երիտասարդ կադրերով, կամավորներով, որակյալ մասնագետներով, փոխվեն պետական չափորոշիչները, շեշտադրվի ոչ թե թղթաբանական հարցերը, այլ կենդանի շփումը շահառուի հետ: Ծառայություն տրամադրողները ունենան մարդկանց հետ շփվելու կարողություններ և հմտություններ, անցնեն վերապատրաստումներ, արժանապատիվ վարձատրություն ունենան, հատուկ ուշադրություն դարձվի հոգևոր արժեքների զարգացման վրա, գնահատեն մարդուն որպես բարձրագույն արժեք, նրա նկատմամբ ցուցաբերեն հարգանք, ապրումակցում: Եղած մասնագիտական ռեսուրսը ոչ թե կրճատվի, այլ ավելացվի:

## 2. Արմավիր համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները

Արմավիր համայնքի սոցիալական ոլորտի տեսլական է համայնքում հասանելի և որակյալ ծառայությունների առկայությունը երեխաների ժամանցի, ընտանիքի, տարեցների և հաշմանդամության ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության ոլորտներում:

Նշված տեսալականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները

- Ընդլայնել համայնքում առկա սոցիալական, առողջապահական, հոգեբանական ծառայությունների մատուցմանը ՝ ուղղված ընտանիքների բազմաֆունկցիոնալ աջակցությանը, որն իր տրամադրած ծառայությունների միջոցով կնպաստի ընտանիքների հզորացմանը, կյանքի դժվարին իրավիճակների հաղթահարմանը:
- Արմավիր խոշորացված համայնքում ստեղծել 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և ժամանցի կենտրոն, նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, նոր հմտությունների ձեռքբերմանը, ժամանցի ապահովմանը:
- Արմավիր քաղաքում ստեղծել տարեցների ցերեկային կենտրոն՝ ապահովելով նրանց զբաղվածությունն ու խթանելով նրանց հասարակական ակտիվությունը:

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները՝ արդյունքները և անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1.-ում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

| *հ/հ* | *Խնդիրները* | *Միջանկյալ արդյունքները* | *Անհրաժեշփ գործողությունները* | *Պահանջվող ռեսուրսները* |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության | 1. Արմավիր խոշորացված համայնքում տարեկան 70 շահառուի տրամադրում է բազմաֆունկցիոնալ ծառայություն առավել հարմարավետ հնարավորություններով և տեխնիկական սարքերով:<br>2. Շահառու ընտանիքները ստանում են բազմամասնագիտական թիմի կողմից տրամադրվող որակյալ ծառայություն, ընդլայնվում է շահառուների թիվը, ընտանիքների առնվազն 75%. գոհ է մատուցվող ծառայությունից:<br>3. Շահառուները մասնակցում են բազմաբնույթ միջոցառումների, կրթական դասընթացների և մշակութային իրադարձությունների, ձեռք են բերում նոր գիտելիքներ, հմտություններ, շփումներ և իրենց խնդիրներն ինքնուրույն հաղթահարելու նոր ուղիներ:<br>4. Յուրաքանչյուր ամիս կազմակերպվել է դեպքերի քննարկում՝ տարեկան 12 հանդիպում, համագործակցային ցանցի անդամների մասնակցությամբ, քննարկվել են ընտանիքների աջակցության տրամադրման աշխատանքները եւ հստակեցվել կողմերի ներգրավումն ու աջակցությունը: | ✓ Բարեկարգել տարածքը, հագեցնել նոր գույքով, տեխնիկական սարքավորումներով<br>✓ Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները՝ որակավորում, աշխատանքային փորձ, մասնագիտական հմտություններ:<br>✓ Համալրել աշխատակազմը, ներգրավելով նոր մասնագետներ (սոցիալական աշխատող, հոգեբան արտ-թերապևտ, դասընթացավար, կամավորներ):<br>✓ Իրականացնել ընտանիքների աջակցության կարիքների գնահատում, անհատական զարգացման ծրագրերի կազմում և իրագործում:<br>✓ Նախատեսվող միջոցառումների կազմակերպում՝ հանդիպումներ, դասընթացներ, համերգներ, ցուցահանդեսներ:<br>✓ Քարտեզագրել շահագրգիռ կառույցները<br>✓ Համագործակցություն ստեղծված ցանցի հետ կլոր սեղան քննարկումների կազմակերպում, դեպքերի քննարկում: Ընտանիքների աջակցության անհատական ծրագրերի կազմում եւ իրականացում: | Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 1. Արմավիր խոշորացված համայնքում գործում է ցերեկային խնամքի և ժամանցի կենտրոն 18տ-ից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց համար: | ✓ Հատկացնել/ձեռք բերել համապատասխան տարածք<br>✓ Իրականացնել վերանորոգման աշխատանքներ եւ շենքային պայմանները հարմարեցնել մատուցվող ծառայությունների պահանջներին, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:<br>✓ Կենտրոնը համալրել գույքով եւ անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով: | |
| | | 2. Արմավիր խոշորացված համայնքում 18տ և բարձր հաշմանդամություն ունեցող 60 շահառու ստանում են որակյալ ծառայություն | ✓ Ձևավորել բազմամասնագիտական աշխատանքային թիմ, բարձր որակավորմամբ հետևյալ մասնագետներով՝ սոցիալական աշխատող, հոգեբան, արտ թերապևտ, նեղ մասնագիտական ուղղվածության դասընթացավար՝ ըստ կարիքի գնահատման, կամավորներ:<br>✓ Մշակել աշխատանքային գործիքակազմ և մեթոդաբանություն: Շահառուների կարիքների գնահատման միջոցով կազմել անհատական աշխատանքային պլան, որն ուղղված կլինի ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցության և մասնագիտական նոր հմտությունների զարգացմանը, սոցիալական ներառմանը:<br>✓ Ցերեկային կենտրոնի մասնագետները կմատուցեն ամենօրյա ծառայություն 18տ-ից բարձր տարիքային խմբի շահառուների համար, շաբաթական 15 շահառու, ապահովելով նրանց զբաղվածությունը, խթանելով հասարակական ակտիվությունը, սոցիալական ներառումն ու մասնակցությունը համայնքային կյանքին: | |
| | | 3. Յուրաքանչյուր ամիս կազմակերպվել է դեպքերի քննարկում՝ տարեկան 12 հանդիպում:<br>Համագործակցային ցանցի անդամների մասնակցությամբ քննարկվել են շահառուների աջակցության տրամադրման աշխատանքները և հստակեցվել կողմերի ներգրավումն ու աջակցությունը | ✓ Քարտեզագրել շահագրգիռ կառույցները:<br>✓ Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ, կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառու անձանց աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը:<br>✓ Համագործակցություն ստեղծված ցանցի հետ կլոր սեղան քննարկումների կազմակերպում, դեպքերի քննարկում: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 1. Արմավիր քաղաքում ստեղծվել է տարեցների ցերեկային կենտրոն, որը ծառայություններ է մատուցում ամսեկան միջինում 40 շահառուի<br>2. Արմավիր քաղաքի տարեցների կենտրոնը ծառայություններ է մատուցում ամսեկան միջինում 40 շահառուի՝ ապահովելով նրանց զբաղվածությունը, խթանելով հասարակական ակտիվությունը, սոցիալական ներառումն ու մասնակցությունը համայնքային կյանքին: | ✓ Բարեկարգել տարածքն ու հագեցնել համապատասխան գույքով ու սարքավորումներով:<br>✓ Կազմել ծառայությունների նկարագիրը, տեխնիկական առաջադրանքները, հավաքել համապատասխան աշխատակազմ, կազմել աշխատանքային ժամանակացույց:<br>✓ Համապատասխան մասնագետների կողմից իրականացնել կարիքների գնահատում, կազմել սոցիալական աջակցման ծրագրեր, կազմակեպել տարեցների ազատ ժամանցն ու զբաղվածությունը, ինչպես նաև տարբեր խմբակներ, պարբերաբար կազմակերպել մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1.

## «Ընտանիքների աջակցության ծառայություն Արմավիր խոշորացված համայնքում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Ընդլայնել համայնքում առկա սոցիալական, առողջապահական, հոգեբանական ծառայությունների մատուցմանը ՝ ուղղված ընտանիքների բազմաֆունկցիոնալ աջակցությանը, որն իր տրամադրած ծառայությունների միջոցով կնպաստի ընտանիքների հզորացմանը, կյանքի դժվարին իրավիճակների հաղթահարմանը | | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | 50 | 70 | 70 | 80 | 80 | 80 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | 3 | 5 | 5 | 6 | 6 | 7 |
| | 2. Շահառուների ընտանիքներ ստանում են մասնագիտացված ծառայություններ | | | | | | |
| | Շահառուների բավարարվածության աստիճան | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | 50% | 65% | 65% | 70% | 70% | 75% |
| | 3. Շահառուների ընտանիքների խնդիրների հաղթահարման բազմամասնագիտական քննարկումներ | | | | | | |
| | Քննարկումների քանակ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Բարեկարգել տարածքը, հագեցնել նոր գույքով, տեխնիկական սարքավորումներով<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները՝ որակավորում, աշխատանքային փորձ, մասնագիտական հմտություններ:<br>2.2 Համալրել աշխատակազմը, ներգրավելով նոր մասնագետներ (սոցիալական աշխատող, հոգեբան արտ-թերապևտ, դասընթացավար, կամավորներ):<br>2.3 Իրականացնել ընտանիքների աջակցության կարիքների գնահատում, անհատական զարգացման ծրագրերի կազմում և իրագործում:<br><br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>3.1 Նախատեսվող միջոցառումների կազմակերպում՝ հանդիպումներ, դասընթացներ, համերգներ, ցուցահանդեսներ: | | | | | | |

| | |
|---|---|
| | 4-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>4.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները<br><br>4.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառու ընտանիքներին աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը |
| Ծրագրի բյուջեն | 10.5 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի խոցելի ընտանիքներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ներածություն<br>ՀՀ սահմանադրություն Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը<br>Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը, պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:<br>ՀՀ -ում ընտանիքների հիմնական մարտահրավերները<br>Աղքատություն<br>Ամուսնալուծությունների թվի աճ, կազմալուծված ընտանիքներ<br>Ընտանեկան փոխհարաբերություններ՝ բռնություն, կոնֆլիկտներ, տարատեսակ կախվածություններ, ծնողավարման հմտությունների ցածր մակարդակ<br>Մեկ ծնողով ղեկավարվող ընտանիքներ (աշխատանքային միգրացիայով պայմանավորված), միայնակ մայրություն, ինչի հետևանքով առաջանում են երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հետ կապված տարբեր դժվարություններ (տնտեսական, սոցիալական, հոգեբանական), քանի որ մեկ ծնողի վրա է ընկնում լրացուցիչ ծանրաբեռնվածություն, որը պետք է բաշխված լիներ երկու ծնողի միջև:<br>Երեխաների խնամքը ընտանիքում կազմակերպելու անկարողություն, մանկալքություն<br>Աղքատությունը ՀՀ-ում<br>Համաձայն Համաշխարհային բանկի սահմանման՝ աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է:<br>Ըստ Վիճակագրական կոմիտեի «Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020թթ» զեկույցի՝ 2020թ-ին Հայաստանում աղքատության մակարդակը գնահատվել է 27%, որը 0,6% տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա 26,4%-ից: Ընդ որում Արմավիրի մարզում կազմել է 36.2%:<br>Նյութական և ոչ նյութական աղքատություն<br>Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:<br>Հաճախ ընտանիքները դրսևորում են սոցիալական պասիվություն, որը էապես վատ է անդրադառնում երեխաների զարգացման, կրթության և առողջության վրա: Սա իր հետ առաջ է բերում կենցաղավարման, ծնողավարման, կյանքի հմտությունների, կառավարման դժվարություններ: Վերջինս նաև նախապայմաններ է ստեղծում ընտանեկան բռնությունների ակտիվացման համար:<br>Այսպիսով, աղքատությունը հանգեցնում է հասարակության մեջ լիարժեք ներառվելու դժվարությանը, հաճախ նաև անկարողությանը, ինչպես նաև հասարակությունից օտարմանը: |

## Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  N 2.

## *« 18 և բարձր փարիքի հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծառայություն»*

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Արմավիր խոշորացված համայնքում ստեղծել 18տ-ից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և ժամանցի կենտրոն, նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, նոր հմտությունների ձեռքբերմանը, ժամանցի ապահովմանը | | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 60 | 70 | 70 | 80 | 80 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների ազդեցությունը շահառուների ակտիվ նեռամանը | | | | | | |
| | Ներառման աշտիճան | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 40% | 40% | 45% | 45% | 45% |
| | 2. Կենտրոնի կողմից մատուցվում եմ որոկյալ ծառայություններ | | | | | | |
| | Մատուցվող ծառայությունների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| | 3. Համայնքում գործում է համագործակցության ցանց | | | | | | |
| | Համագործակցող կազմակերպությունների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2022 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Հատկացնել/ձեռք բերել համապատասխան տարածք<br>1.2 Իրականացնել վերանորոգման աշխատանքներ եւ շենքային պայմանները հարմարեցնել մատուցվող ծառայությունների պահանջներին, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:<br>1.3 Կենտրոնը համալրել գույքով եւ անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով:<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Ձևավորել բազմամասնագիտական աշխատանքային թիմ, բարձր որակավորմամբ հետևյալ մասնագետներով՝ սոցիալական աշխատող, հոգեբան, արտ թերապևտ, նեղ մասնագիտական ուղղվածության դասընթացավար՝ ըստ կարիքի գնահատման, կամավորներ:<br>2.2 Մշակել աշխատանքային գործիքակազմ և մեթոդաբանություն: Շահառուների կարիքների գնահատման միջոցով կազմել անհատական աշխատանքային պլան, որն ուղղված կլինի իքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցության և մասնագիտական նոր հմտությունների զարգացմանը, սոցիալական ներառմանը:<br>2.3 Ցերեկային կենտրոնի մասնագետները կմատուցեն ամենօրյա ծառայություն 18տ-ից բարձր տարիքային խմբի շահառուների համար, շաբաթական 15 շահառու, ապահովելով նրանց զբաղվածությունը, խթանելով հասարակական ակտիվությունը, սոցիալական | | | | | | |

| | |
|---|---|
| | ներառումն ու մասնակցությունը համայնքային կյանքին:<br><br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br><br>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները:<br>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ, կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառու անձանց աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը:<br>3.3 Համագործակցություն ստեղծված ցանցի հետ կլոր սեղան քննարկումների կազմակերպում, դեպքերի քննարկում: |
| Ծրագրի բյուջեն | 11 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքում բնակավայրերի քանակը, տարածությունը, տրանսպորտային հասանելիությունը |
| Ծրագրի հիմնական շահառուները | 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձիք |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Հաշմանդամությունը, առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք է, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:<br>Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացրել է ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան:<br>Հավասար եւ մատչելի պայմանների ապահովման, համընդհանուր ներառման նպատակով կազմվել են իրավական փաստաթղթեր՝ միջազգային, համընդհանուր եւ տեղական՝<br><br>- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա<br>- «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության մասին» օրենքը<br>- ՀՀ կառավարության «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը<br><br>Վիճակագրության համաձայն աշխարհի բնակչության 15%-նն ունի որևէ տեսակի տեսանելի և ոչ տեսանելի հաշմանդամություն: Հաշմանդամություն ունի 10 երեխայից մեկը, յուրաքանչյուր հինգերորդ կին իր կյանքի ընթացքում կարող է հաշմանդամություն ձեռք բերել: Արմավիրի մարզը խիտ բնակեցված բնակավայր է, հաշմանդամության ցուցանիշն այստեղ բարձր է:<br>Արմավիր խոշորացված համայնքում գործում է մեկ վերականգնողական և մեկ աջակցության կենտրոն 0-18տ հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն 18տ-ից բարձր անձինք դուրս են մնում որևէ ծառայություն ստանալու հնարավորությունից: Մինչդեռ, ի թիվ այլ գործոնների, ինչպես նաև պատերազմի գործոնով պայմանավորված՝ վերջին տասնամյակում ՀՀ-ում ավելացել է հաշմանդամություն ունեցող չափահաս անձանց թիվը, ովքեր ունեն տարբեր կարգի հաշմանդամություն, չեն ստանում ոչ մի սոցիալական, հոգեբանական աջակցություն, որն էլ նպաստում է հասարակությունից նրանց օտարմանն ու մեկուսացմանը:<br>Ցերեկային խնամքի և ժամանցի կենտրոնի ստեղծումը 18տ-ից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն կտա դառնալ հասարակության լիարժեք անդամ, ձեռք բերել կյանքի նոր հմտություններ, ինչու չէ նաև մասնագիտական հմտություններ, նոր շփումներ, որն էլ ավելի կբարձրացնի նրանց կյանքի որակը: |

## *Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  N 3.*

## *« Տարեցների խնամքի կենտրոն Արմավիր բազմաբնակավայր համայնքում»*

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</td></tr>
<tr><td rowspan="15">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Արմավիր քաղաքում ստեղծել տարեցների ցերեկային կենտրոն՝ ապահովելով նրանց զբաղվածությունն ու խթանելով նրանց հասարակական ակտիվությունը:</td></tr>
<tr><td rowspan="3">Ծառայությունից օգտվող շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>40</td><td>40</td><td>50</td><td>50</td><td>60</td></tr>
<tr><td colspan="7">1. Համայնքի բնակիչները բավարված են կետրոնում մատուցվող ծառայություններից</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների՝ ծառայություններից բավարարվածության մակարդակ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>90%</td><td>90%</td><td>95%</td><td>95%</td><td>95%</td></tr>
<tr><td colspan="7">2. Համայնքում գործում է համագործակցության ցանց</td></tr>
<tr><td rowspan="3">Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2021</td><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>-</td><td>5</td><td>5</td><td>7</td><td>7</td><td>7</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Բարեկարգել տարածքն ու հագեցնել համապատասխան գույքով ու սարքավորումներով:<br>1.2 1.2 Կազմել ծառայությունների նկարագիրը, տեխնիկական առաջադրանքները, հավաքել համապատասխան աշխատակազմ, կազմել աշխատանքային ժամանակացույց:1.2 Կազմել տարեցներին անհրաժեշտ ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր2-րդ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Համապատասխան մասնագետների կողմից իրականացնել կարիքների գնահատում, կազմել սոցիալական աջակցման ծրագրեր, կազմակեպել տարեցների ազատ ժամանցն ու զբաղվածությունը, ինչպես նաև տարբեր խմբակներ, պարբերաբար կազմակերպել մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ |
| Ծրագրի բյուջեն | 10 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, ծրագրով նախատեսված սոցիալական ծառայությունների մասնագետներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Բնակչության շրջանում առկա կարծրատիպերը |
| Ծրագրի հիմնական շահառուները | Միայնակ տարեցներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը բնակչության կառուցվածքում տարեց բնակչության տեսակարար կշռի աճն է, ինչը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցությունում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև՝ միգրացիայի հետևանք է: Ըստ միջազգայնորեն ընդունված ժողովրդագրական նորմերի, եթե որևէ հասարակության բնակչության 65 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը 12 տոկոս և բարձր է, այն համարվում է ծերացած: Համաձայն ՀՀ վիճակագրության մեր երկիրը համարվում է ծերացող երկիր: Առաջիկա տարիներին սպասվում է բնակչության կառուցվածքի մեջ տարեցների թվաքանակի աճ, քանի որ կենսաթոշակային տարիք կսկսեն մուտք գործել 1960-ականներին ծնված՝ գրեթե կրկին անգամ ավելի մեծ թվով անձինք: Եթե մինչկենսաթոշակային տարիքի բնակչության ծավալուն միգրացիոն ներհոսք կամ ծնելիության կտրուկ աճ տեղի չունենա (թե՛ մեկը, թե՛ մյուսը քիչ հավանական են), ապա Հայաստանի բնակչության ծերացման երևույթն ահագնացող թափ կհավաքի, ու երկիրը կհայտնվի լուծում պահանջող ծանրակշիռ սոցիալ-տնտեսական համալիր հիմնախնդիրների առջև: Խնդիրն առավել սուր է մարզերում, որտեղից երիտասարդները մեկնում են և մնում են միայն տարեցները:<br>Արմավիր համայնքը զերծ չէ վերոնշյալ խնդրից, ինչին գումարվել է նաև համայնքից արտագաղթի աճը՝ դարձնելով այն առավել խոցելի:<br>Արմավիր քաղաքն ունի 38 500 բնակիչ, որից՝ 3780-ը 63-ից բարձր տարիք ունեցողներն են՝ համաձայն ԱԶԿ ՀԿ-ի կողմից անցկացված համայնքի կարիքների գնահատման 2022թ. փետրվար ամսին: Ստացվում է, համայնքում տարեցների թիվը շատ է, որոնք, սակայն չունեն որևէ զբաղմունք, որևէ տեղ գնալու, շփվելու միմյանց հետ, անցկացնելու իրենց ժամանցը, մասնակցելու նաև համայնքի կյանքին: Խնդիրն ավելի է սրվում հատկապես ձմռան ամիսներին, երբ բոլորը մնում են տանը: Նրանց զբաղված չլինելու, շփումներում և հասարակական կյանքում մասնակից չլինելու հետևանքով տարեցներն ավելի են մեկուսանում, օտարանում, ունենում են հոգեբանական խնդիրներ, ընտանիքում հաճախ դառնում են չհասկացված, երբեմն նաև՝ կոնֆլիկների պատճառ: Իսկ նրանցից շատերն ապրում են միայնակ, քանի որ ընտանիքի անդամները լքել են համայնքը: Խնդիրը գնալով ավելի կդառնա դժվար լուծելի իր բոլոր բացասական հետևանքներով, եթե համայնքում չիրականացվի որևէ միջամտություն:<br><br>Հարկ է նշել, որ խնդրի լուծումն ունի նաև պետական ռազմավարական նշանակություն. բնակչության սոցիալական պաշտպանության քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է տարեցների կյանքի որակի բարելավումը, ինչը մշտապես գտնվում է ՀՀ Կառավարության ուշադրության կիզակետում: Չնայած իրականացվող բազմաթիվ ծրագրերին, տարեցների համար լիարժեք և արժանավայել կյանք ապահովելու համար անհրաժեշտ են մի շարք գործոններ՝ հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն, անհրաժեշտ սոցիալական և առողջապահական ծառայություններ, նյութական և |

| | |
|---|---|
| | բնակարանային ապահովություն, հարմարավետ տրանսպորտ և սոցիալական շփումներ:<br>ՀՀ-ն մշակել և ընդունել է «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարություն», որի ընդունման անհրաժեշտությունը բխում էր նաև 2002թ. ընդունված «Ծերացման խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեգիոնալ իրականացման ռազմավարության» դրույթներից:<br>Համաձայն ՀՀ ռազմավարության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների արդյունավետ լուծումները ենթադրում են հանրապետության բոլոր տարածաշրջաններում տարեցների հիմնահարցերի բացահայտում և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ համարժեք գործողությունների իրականացում հասարակական կյանքում տարեց անձանց մասնակցության ընդլայնման, նրանց սոցիալական մեկուսացման բացառման, սոցիալական ներառման և ինքնուրույնությունը խթանելու, երկրի բնակչության ծերացման հետևանքները մեղմելու, ներկա և ապագա սերունդների համար պատշաճ և տևական սոցիալական պաշտպանություն երաշխավորելու, տարեց անձանց ներուժի առավելություններից օգտվելու ուղղությամբ:<br>Համայնքում տարեցների համար ցերեկային կենտրոնի ստեղծումը կնպաստի տարեցների աշխուժացմանը, նրանց զբաղվածության խնդրի լուծմանը, ժամանցի անցկացմանը՝ դառնալով հասարակական կյանքի ու համայնքի անցուդարձին տեղեկացված և մասնակից: Սրանով նրանք իրենց ավելի արժևորված կզգան, կգնահատվի իրենց դերը, նախկինում իրենց ունեցած համայնքի հիմնադիր դերը, ինչպես նաև միջսերնդային հարաբերությունները զարգացնելու միջոցով կապահովվի նրանց սոցիալական ներառումը և մասնակցությունը համայնքային կյանքին:<br>Այս նպատակով համայնքը կիրականացնի ներդրումներ. համապատասխան տարածքը կհատկացվի համայնքից, որը կբարեկարգվի և կվերանորոգվի ծրագրի շրջանակներում, կունենա մաքուր և գրավիչ տեսք: Կենտրոնը հագեցած կլինի համապատասխան գույքով ու կահույքով, ձմռան ամիսներին՝ ջեռուցումով, ամռանը՝ օդափոխման համակարգով, քանի որ այստեղ ամռանը շատ շոգ է լինում: Կենտրոնի գործարկման ընթացիկ ծախսերը կլինեն այս ծրագրի շրջանակներում, որից հետո, ԱԶԿ ՀԿ-ն կդիմի ԱՍՀՆ կողմից հայտարարվող ամենամյա դրամաշնորհին՝ տարեցների ցերեկային խնամքի ներքո, որի շրջանակներում կշարունակվի ծառայությունների մատուցումը տարեցներին Արմավիրում: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2022 թվականի N 143-Ա

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 11-ի թիվ 058-Ն որոշմամբ և հիմք ընդունելով սոցիալապես անապահով խավերի կողմից ներկայացված դիմումներն ուսումնասիրող հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 3350 եզրակացությունը՝

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.Արմավիր համայնքի 2022 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» 10 բաժնի 7 խմբի 1 դասի ծախսերի 4729 հոդվածի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի
ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 143-Ա ՈՐՈՇՄԱՆ

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Հասցե | Գումար |
|---|---|---|---|
| 1 | Հակոբյան Հովհաննես Վոլոդյայի | Արմավիր քաղաք Շնչենկո 4ա տուն | 20.000 դրամ |
| 2 | Գրիգորյան Արմինե Վրեժի | Սարդարապատ գյուղ 2 փողոց 52 տուն | 25.000 դրամ |
| 3 | Մուշեղյան Աղավնի Կոլյայի | Սարդարապատ գյուղ 2-րդ փողոց 59 տուն | 25.000 դրամ |
| 4 | Հակոբյան Ինգա Ռուբենի | Սարդարապատ գյուղ 22 փողոց 11 տուն | 25.000 դրամ |
| 5 | Ավետիսյան Անժելա Հայկի | Արմավիր քաղաք Սահմանապահների փողոց 78 տուն | 25.000 դրամ |
| 6 | ԿարապետյանՄարիա Ջիվանի | Արմավիր քաղաք Մուրացան փողոց 5-րդ նրբանցք 2-րդ տուն | 25.000 դրամ |
| 7 | Ներսիսյան Քնքուշ Ենոքի | Արմավիր քաղաք Հանրապետության փողոց 4-րդ նրբանցք 4 տուն | 30.000 դրամ |
| 8 | Գևորգյան Հերմինե Ֆահրատի | Արմավիր քաղաք Գորկու փողոց 3-րդ նրբանցք 4 տուն | 30.000 դրամ |
| 9 | Կիրակոսյան Արմինե Սամվելի | Արմավիր քաղաք Գորկու 3-րդ նրբանցք 1 տուն | 30.000 դրամ |
| 10 | Սվազյան Ռիմա Արտավազդի | Արմավիր քաղաք Չարենցի 24 շենք 13 բնակարան | 30.000 դրամ |
| 11 | Հովհաննիսյան Դոնարա Արտուշի | Նորավան գյուղ 3-րդ փողոց 21 տուն | 40.000 դրամ |
| 12 | Աբրահամյան Վերգինե Սիմոնի | Արաքս գյուղ Խաչունց փողոց 56 տուն | 40.000 դրամ |
| 13 | Հարությունյան Անահիտ Ավետիքի | Արմավիր քաղաք Թամանյան փողոց 29Ա տուն | 40.000 դրամ |
| 14 | Մարգարյան Աննա Թադևոսի | Սարդարապատ գյուղ 4-րդ փողոց 4 տուն | 40.000 դրամ |
| 15 | Միքայելյան Լուսինե Աշոտի | Արմավիր քաղաք Մաշտոցի փողոց 3-րդ նրբանցք 8 տուն | 50.000 դրամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2022 թվականի N 144-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 056-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Արմեն Հարությունյանի 2022 թվականի հունիսի 20-ի թիվ 3367 զեկուցագիրը և Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի ««Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 056-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման հավելվածի 2-րդ կետում հաստիքային միավորների թիվը - «109.5» թիվը փոխարինել «110.5» թվով.

2)որոշման հավելվածի Բ)Աղբահեռացման տեղամաս աղյուսակի 3-րդ կետի հաստիքային միավորներ բաժնում «Ջրցանի վարորդ -1- 100000» փոխարեն կարդալ «ջրցանի վարորդ -2- 135000».

3)որոշման հավելվածի Բ)Աղբահեռացման տեղամաս աղյուսակի ընդամենը տողում «45» թիվը փոխարինել «46» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2022 թվականի N 145-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ-3 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ,ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ, ԱՅԳԵՎԱՆ, ԼԵՆՈՒՂԻ, ԼՈՒԿԱՇԻՆ, ԽԱՆՋՅԱՆ, ՀԱՑԻԿ, ՄԱՅԻՍՅԱՆ, ՆՈՐԱՎԱՆ, ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԵՐԻ, ԱՐՄԱՎԻՐ-1 ՄՅԱՍՆԻԿՅԱՆ, ԱՐՄԱՎԻՐ-2 ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1094-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 22.06.2022 թվականի թիվ 2-5 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման համայնքների տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրություն և տարածքային գոտիավորման Արմավիր քաղաքի, Այգեվան, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Նորավան, Սարդարապատ գյուղերի, Արմավիր-1 Մյասնիկյան, Արմավիր-2 Արաքս գյուղերի նախագիծը:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համալրել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի նպատակային և գործառական նշանակությունների

փոփոխություններ (հողամասերի կատեգորիաների տրանսֆորմացիան)» գծագրին և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022թ. հունիսի 24
ք. Արմավիր